# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Վայք**

**09/03/2022**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սիմոն Բաբայանը, Արտավազդ Խաչատրյանը, Սոնա Կարապետյանը, Կառլեն Մինասյանը, Համբարձում Ջանոյանը

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>**

**<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մ. Մաթևոսյանը</u>**

**<u>Նիստը արձանագրում էր ՝ ը</u>**

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՐՏԻ 9-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1.Վայք քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին,
2.Վայք համայնքի վանչական տարածքում գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին,
3.Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գործավարության կարգը հաստատելու մասին,
4.<<Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ

իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին<<
5.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող գազատար խողովակաշարերը <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով հաստատելու մասին,
6.Վայք համայնքի ղեկավարի տեղակալների պաշտոններում նշանակումներ կատարելու մասին,
7.Վայք համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու և Վայք համայնքի ավագանու 30.01.2018թ. թիվ 13 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,
8.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով տնտեսական զարգացման ծրագրային հայտեր ներկայացնելու մասին,
9.Վայք հմայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին,
10.Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին,
11.Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը, աղբահանության սխեման հաստատելու մասին:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին

***ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԸՆԴԳՐԿՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ և ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՄԱՎՈՆ ԱԶԱՏՅԱՆ/***

Հիմք ընդունելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին 13-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջներով

1.Հաստատել Վայք քաղաքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ն/

Լսեցին
***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԾՄԱԿՈՆ ԱԶԱՏՅԱՆ/***

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի պահանջներով

1.Սահմանել Վայք համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
2.Սահմանել Վայք համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն N2 հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ն/

Լսեցին
***ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԾՄԱԿՈՆ ԱԶԱՏՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով

1.Հաստատել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գործավարության կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

Լսեցին
***<<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>***

**/Զեկ. ՇՄԱՎՈՆ ԱԶԱՏՅԱՆ/**

Հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով

1.Սահմանել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԸ <<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

**/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով

1.Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող ներքոհիշյալ ցածր ճնշման վերգետնյա գազատար խողովակաշարերն անհատույց օգտագործման իրավունքով, 20 տարի ժամկետով , հատկացնել <<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ-ին:
ա/ Զառիթափ 3-րդ փողոց 1-ին նրբ. 7 /D-57մմ, L -34.0մ, D -108մմ, L -13մ/,
բ/Զառիթափ 3-րդ փողոց 1-ին փակուղի 7 /D-57մմ, L -60.5մ,/,
գ/Զառիթափ 1-ին փողոց 3-րդ նրբանցք 15 /D-57մմ, L -48.0մ /,
դ/Զառիթափ 4-րդ փողոց 30 /D-57մմ, L -328.4մ , D-76մմ, L -17.0մ/,
ե/Զառիթափ 3-րդ փողոց 53 /D-57մմ, L -549.0մ/,
զ/Զառիթափ 1-ին փողոց 27/3 /D-57մմ, L -19.5մ , D-108մմ, L -12.0մ/,
է/Զառիթափ 9-րդ փողոց 45 /D-57մմ, L -126.0մ/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. ՀՀ Վայոց ձոր մարզի Վայք համայնքի ավագանու անդամ՝ Հայկ Հովիկի Ավագյանին նշանակել Վայք համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում:
2.ՀՀ Վայոց ձոր մարզի Վայք համայնքի բնակիչ՝ Սարո Սամվելի Հովսեփյանին նշանակել Վայք համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:
3.ՀՀ Վայոց ձոր մարզի Վայք համայնքի բնակիչ՝ Գարիկ Գագիկի Սարգսյանին նշանակել Վայք համայնքի ղեկավարի տեղակալի /աշխարհազորի/ պաշտոնում:
4.Վայք համայնքի ղեկավարի տեղակալների գործառույթները սահմանված են <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի և <<ՀՀ Վայոց ձոր մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությամբ:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին

***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.01.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 13 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՄԱՎՈՆ ԱԶԱՏՅԱՆ/***

Ղեկավարվելով ՀՀ <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 164-Ն որոշմամբ,

1.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 30.01.2018թ. թիվ 13 որոշումը:
2.Համայնքապետարանին կից ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:

3. հաստատել համայնքի ղեկավարի առաջարկած խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը.
3.1.Հայկ Ավագյան-համայնքի ղեկավարի տեղակալ-հանձնաժողովի նախագահ,
3.2.Շմավոն Ազատյան-աշխատակազմի քարտուղար-հանձնաժողովի քարտուղար,
3.3.Լիլիթ Հակոբյան-գլխավոր մասնագետ /սոց աշխատող/-հանձնաժողովի անդամ,
3.4.Հովսեփ Զաքարյան-առաջատար մասնագետ /իրավաբան/-հանձնաժողովի անդամ,
3.5.Ռուզաննա Ղազարյան-<<Աշխատանք և Հայրենիք>> ՀԿ-հանձնաժողովի անդամ,
3.6.Աշոտ Հարությունյան-սոցիալական ապահովության Վայքի տարածքային կենտրոն -հանձնաժողովի անդամ,
3.7.Արտակ Հովհաննիսյան -սոցիալական ծառայության Վայքի տարածքային բաժին-հանձնաժողովի անդամ,
3.8.Հրաչիկ Մանուչարյան-Վայք համայնքի ավագանու անդամ /բժիշկ/-հանձնաժողովի անդամ,
3.9.Անուշ Արամյան-Վայք համայնքի ավագանու անդամ /մանկավարժ/-հանձնաժողովի անդամ:
4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետով,

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Վայք համայնքի կողմից Տնտեսական զարգացման ծրագրին մասնակցելու վերաբերյալ ներկայացվող հայտերը:
2.Վայք համայնքի համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում և Վայք քաղաքային զբոսայգում Արցախյան պատերազմում զոհված հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձան - համալիրի կառուցում: /60 000 000 ՀՀ դրամ/:
Համայնքի կողմից ներդրում՝ 55% /33 000 000 ՀՀ դրամ/:
3.Վայք համայնքի Վայք քաղաքի Վ.Համբարձումյան փողոցի 380 ԳԾ/մ, Ջերմուկի խճ. փողոցի 320 ԳԾ/մ, Սարավան բնակավայրի 3000 ԳԾ/մ և Փոռ բնակավայրի 200 ԳԾ/մ հատվածների գազատարի ներքին ցանցի կառուցում և Սարավան բնակավայրում 3000 ԳԾ/մ հատվածի վերանորոգում: /65 000 000 ՀՀ դրամ/:

Համայնքի կողմից ներդրում՝ 45% /29 250 000 ՀՀ դրամ/:
4.Վայք համայնքի Արին և Ազատեկ բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի, գլխամասային կառույցների արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ: /155 000 000 ՀՀ դրամ/:
Համայնքի կողմից ներդրում՝ 35% /54 250 000 ՀՀ դրամ/:
5.Վայք համայնքի Զառիթափ և Գոմք բնակավայրերի ոռոգման ջրի ջրագծերի, գլխամասային կառույցի արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ: /115 301 500 ՀՀ դրամ/:
Համայնքի կողմից ներդրում՝ 35% /40 355 525 ՀՀ դրամ/:
6."ՀՀ Վայոց ձոր մարզի Վայք համայնքի Զառիթափ մանկապարտեզ " ՀՈԱԿ-իառաջին մասնաշենքի հիմնանորոգում: /62 516 000 ՀՀ դրամ/:
Համայնքի կողմից ներդրում՝ 30% /18 754 800 ՀՀ դրամ /:
7.Վայք համայնքի Վայք քաղաքի Մայիսյան և Շինարարների փողոցների և Վայք համայնքի Հերհեր բնակավայրի 1-ին փողոցի ասֆալտապատում: /Մայիսյան փողոցը 0+70մ և Շինարարների փողոցը 0+112մ-0+112-0+403մ/: Հերհեր բնակավայրի 1-ին փողոց 2400 քմ: /99 773 200 ՀՀ դրամ/:
Համայնքի ներդրում՝ 55% /54 875 260 ՀՀ դրամ/:
8.Վայք համայնքի Մարտիրոս, Սերս և Բարձրունի բնակավայրերի ոռոգման ջրի ջրագծերի, գլխամասային կառույցների արտաքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ: /73 320 400 ՀՀ դրամ/:
Համայնքի ներդրում՝ 30% /21 996 120 ՀՀ դրամ/:
9.Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան և Իսրայել Օրի փողոցների 2000 Գծ/մ հատվածի ասֆալտապատում: /200 000 000 ՀՀ դրամ/:
Համայնքի ներդրում՝ 55 % /110 000 000 ՀՀ դրամ/:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին
***ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջներով

1.Հաստատելով Վայք համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն կից հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՄԱՎՈՆ ԱԶԱՏՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի ապրիլի 12-ին, ժամը՝ 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին
***ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ , ԱՂԲԱՆԱՀՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ , ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՄԱՎՈՆ ԱԶԱՏՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ դրույթներով

1.Հաստատել <<Աղբահանության վճարի վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը, աղբահանության սխեման հաստատելու մասին >> կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ն/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ԼԵՎՈՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԵՎԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____________

*Նիստն արձանագրեց՝* _____________